ՄԵԿ ԿԵՐՊԱՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԸ ԳՈՒՐԳԵՆ ԽԱՆՋՅԱՆԻ «ՍՊԱՆԵԼ ՓՐԿՉԻՆ» ՎԻՊԱԿՈՒՄ

ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ,

Լոռու մարզային գրադարան, ՀՀ, Լոռի,

էլ.հասցե՝ *098150411@mail.ru*

DOI: 10.24234/scientific.v1i43.14

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրված է Գուրգեն Խանջյանի «Սպանել Փրկչին» վիպակի պատումի կերպը: Կառուցվածքաբանական մեթոդի օգնությամբ ներկայացրել ենք մեկ կերպարի տեսանկյան տեխնիկական առանձնահատկությունները: Դա պատումի այն եղանակն է, երբ հեղինակի պայմանական ամենագետությունը սահմանափակվում է մեկ կերպարի դիտանկյունով: Հեղինակը տեսնում և պատմում է այնքան, որքան տեսնում է կերպարը: Պատումի կերպը որոշակիորեն պայմանավորված է նաև գրական ստեղծագործության բովանդակությամբ և կերպարային տիպերով:

Վիպակի հիմնական կոնֆլիկտը հեթանոսական և քրիստոնեական աշխարհընկալումների միջև է: Այն բազմիցս դրսևորվել է հայ և համաշխարհային գրականության մեջ: Գ. Խանջյանի մոտ այդ բախումը որոշակիորեն արդիականացված է և անցկացված անկախ Հայաստանի հասարակական-քաղաքական անցուդարձի բովով: «Սպանել Փրկչին» վիպակը ներկայացնում է գլխավոր կերպար Չունակի՝ Փրկչին որոնելու գործողությունների շղթան: Փրկչին սպանելու հրաման ստացած Չունակը հանդիպում է տարբեր մարդկանց, որոնք մեծ մասամբ թեական-ծաղրական հնչերանգով տեղեկություններ են հաղորդում Հիսուսի մասին: Գործողությունների ողջ ընթացքում Փրկիչն այդպես էլ չի հայտնվում ընթերցողի տեսադաշտում: Նա ամբողջությամբ տեղավորվում է բացակայող կերպարի պայմանաձևում: Փրկչի՝ մշտապես քողարկված մնալը նպաստում է նրա կերպարի խորհրդավորությանը: Այս ամենը գեղարվեստորեն ներկայացնելու համար Գ. Խանջյանն ընտրել է մեկ կերպարի տեսանկյունը: Ողջ վիպակում

պահպանված են այդ մեթոդի առանձնահատկությունները: Արդյունքում ստացվել է անկաշկանդ և միասնական պատմություն, որը, մեթոդի հատկություններով պայմանավորված, ունի չլուսաբանված կողմեր, քիչ երևացող կամ ընդհանրապես չերևացող կերպարներ: Վերջիններս կազմում են վիպակի հետին՝ խորքային պլանը: Վիպակը հեթանոսականի և քրիստոնեականի բախման նորովի արտահայտություն է:

Բանալի բառեր՝ Գուրգեն Խանջյան, «Սպանել Փրկչին», վիպակ, պատում, կերպար, Չունակ, հեթանոսություն, քրիստոնեություն, տեսանկյուն, ներքին կենտրոնացում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հոդվածի ***նպատակը*** մեկ կերպարի տեսանկյան մեթոդի ուսումնասիրությունն է Գ. Խանջյանի «Սպանել Փրկչին» վիպակում: Խնդիրներն են վիպակի գաղափարական բովանդակության և պատումի կերպի փոխպայմանավորվածությունը ներկայացնելը, երկի իրադարձային շղթայում առաջին և հետին պլաններում ընդգրկվածի հարաբերակցության քննությունը: Հետազոտության առարկան Գ. Խանջյանի «Սպանել Փրկչին» վիպակն է:

Այս վիպակին անդրադարձել են Հասմիկ Խեչիկյանը, Հայկանուշ Շարուրյանը և այլք: Հասմիկ Խեչիկյանը վիպակը քննել է պոստմոդեռնիզմին բնորոշ միֆաքայքայումների (Խեչիկյան Հ.& Սարիբեկյան Հ., 2019), իսկ Հայկանուշ Շարուրյանը՝ «հիսուսյան վեպերի» շրջանակներում (Շարուրյան Հ., 2021): Վիպակը դեռևս չի ուսումնասիրվել կառուցվածքաբանական դիտակետով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Կիրառել ենք վերլուծության և համադրության ընդհանուր տրամաբանական մեթոդները, կառուցվածքաբանական մեթոդը: Մեր աշխատանքի կենտրոնում վիպակի ձևային-պատումային հատկանիշներն են, բայց դրանց հետազոտությունը կտրված չէ բովանդակային վերլուծությունից: Ուշադրության կենտրոնում գաղափարական բովանդակության, կոնֆլիկտի և պատումի կերպի առնչություններն են:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Մեկ կերպարի տեսանկյան մեթոդի առանձնահատկությունները:

Ֆրանսիացի գրականագետ Ժերար Ժենետն առանձնացնում է պատումի հայեցակետի կենտրոնացման երեք եղանակ՝ զրոյական կենտրոնացում, ներքին կենտրոնացում և արտաքին կենտրոնացում: Զրոյական կենտրոնացման դեպքում հեղինակը գիտի և ասում է ավելի շատ, քան կերպարներից յուրաքանչյուրը: Ներքին կենտրոնացման եղանակը ենթադրում է հեղինակի և կերպարի հայացքների պայմանական միաձուլում: Հեղինակը գիտի և ասում է այնքան, որքան գիտի կերպարը: Արտաքին կենտրոնացումը պատումի այն եղանակն է, երբ հեղինակն ասում է ավելի քիչ, քան գիտի կերպարը: Ժ. Ժենետն առանձնացնում է ներքին կենտրոնացման երեք ենթատեսակ՝ ֆիքսված, փոփոխական և բազմակի: Ֆիքսվածի դեպքում ամբողջ պատմության ընթացքում հեղինակը չի հեռանում մեկ կերպարից: Ողջ ընթացքում չի փոխվում տեսանկյունը: Փոփոխականի դեպքում հեղինակը ժամանակ առ ժամանակ հեռանում է կերպարից և նորից վերադառնում: Բազմակին ներկայացնում է նույն իրադարձության պատկերումը տարբեր կերպարների ներքին կենտրոնացմամբ (Женетт Ж., 1998):

Այս հարցերը փոքր-ինչ այլ բնորոշումներով լայնորեն լուսաբանված են նաև Լևոն-Զավեն Սյուրմելյանի «Արձակի տեխնիկա. չափ և խենթություն» աշխատության մեջ: Այսպես՝ վերը նշված զրոյական կենտրոնացումը, Լ.-Զ. Սյուրմելյանի բնորոշմամբ, ամենագետությունն է: Ի հակադրություն ամենագետության՝ մեկ կերպարի տեսանկյունը պայմանական սահմանափակում է: Եթե ամենագետ պատմողը կարող է հեշտությամբ հաղթահարել տարածական և ժամանակային խոչընդոտները, իմանալ և ներկայացնել բոլոր կերպարների ապրումները, մտքերը, ապա մեկ կերպարի տեսանկյունից պատմող հեղինակը գիտի և ասում է միայն այնքան, որքան գիտի այդ կերպարը: Կերպարը, հետևաբար նաև հեղինակն ու ընթերցողը կարող են զուտ ենթադրությունների օգնությամբ դատել այլ կերպարների ներաշխարհում կատարվողի մասին (Սյուրմելյան Լ., 2008): Այս եղանակը համապատասխանում է ներքին կենտրոնացման առաջին ենթատեսակին (ֆիքսված ներքին կենտրոնացում):

Սա ոչ ուղղակի իմաստով հիշեցնում է Նիկոլա Բուալոյի «Քերթողական արվեստ» աշխատության մեջ ձևակերպված «եռամիասնության» օրենքը, համաձայն որի՝ դրամատիկական տեքստի գործողությունները պետք է լինեն

միասնական, տեղի ունենան նույն վայրում և առավելագույնը՝ մեկ օրվա շրջանակներում (Բուալո Ն., 1980)։ Տեղաժամանակային այս սահմանափակումը թելադրում է արտաբեմականը բեմական տիրույթ բերելու հնարների որոնում։ Հենց դա է պատճառը, որ անտիկ և կլասիցիստական դրամատիկական երկերում բերվում էին «պատմող» կերպարներ, որոնք ընթերցող-հանդիսատեսին ներկայացնում էին արտաբեմական գործողությունները։ Արձակում մեկ կերպարի տեսանկյունը չի պարտադրում 24-ժամյա կամ միասնական տեղի կայուն օրենք։ Բայց այդ տեղը և ժամանակը սահմանափակված են մեկ կերպարի ընկալումներով, իսկ գործողության միասնությունն ինքնին ապահովված է այդ նույն կերպարի մշտական ներկայությամբ։ Այսինքն՝ պայմանական բնութագրմամբ՝ բեմական տիրույթը մեկ կերպարի շուրջ և ներսում տեղի ունեցողն է՝ հեղինակին և ընթերցողներին տեսանելի իրադարձային շղթան։ Արտաբեմականը կազմում է հետին պլանը՝ անտեսանելին, բայց ակնարկվողը և պատմվողը։ Եվ արձակագրի առջև արտաբեմականը բեմական տիրույթում ներկայացնելու խնդիր է առաջանում։ Դա որոշակիորեն կոտրում է միապաղաղության և միագծության տպավորությունը։

«Սպանել Փրկչին» վիպակի գաղափարական բովանդակության և պատումի կերպի փոխպայմանավորվածությունը. առաջին և հետին պլաններ։ «Սպանել Փրկչին» վիպակը քննելի է Գ. Խանջյանի աստվածաշնչյան տարընթերցումների համատեքստում։ Այդ ստեղծագործությունները ներկայացնում են Փրկչի կերպարի հեղինակային ընկալումները՝ ներբերված սոցիալ-հասարակական, գաղափարական և հոգեբանական տարաձև բախումների թնջուկում։ Հ. Շարուրյանը գտնում է, որ «Գուրգեն Խանջյանի տեսանկյունից դեպի Աստծո Որդին տանող ճանապարհն ուրվագծվում է հեթանոսության և քրիստոնեության արտահայտիչ հակադրմամբ» (Շարուրյան Հ., 2021)։ Համաշխարհային գրականության մեջ լայնորեն դրսևորված բախման այս ձևը Գ. Խանջյանի մոտ անցնում է անկախ Հայաստանի հասարակական-քաղաքական անցուդարձի բովով։ Ժամանակակից գրական միտումներին բնորոշ միֆաքայքայումը, առասպելի առօրեականացումն ինչ-որ առումով ներկայացնում են վերափոխված բարոյական արժեքները։ Հեթանոսության և քրիստոնեության բախումը Գ. Խանջյանի ստեղծագործություններում նախ և առաջ հակադիր

արժեհամակարգերի բախում է: Դրանով են բացատրվում քրիստոնեական իրադարձությունների հեգնախառն վերապատմումները: Քրիստոնեական իրողությունների առօրեականացումը բարձր արժեհամակարգերի անկման արտահայտություն է: Այս համակարգում է տեղավորվում նաև Փրկչի կերպարի ապաաստվածականացում-մարդացումը:

«Սպանել Փրկչին» վիպակի կերպարային համակարգի կենտրոնում քրմերի կողմից ուղարկված Չունակն է, որ գործողությունների ողջ ընթացքում սպանելու նպատակով փնտրում է Փրկչին, բայց այդպես էլ չի հանդիպում նրան: Չունակին հանդիպող աստվածաշնչյան և ոչ աստվածաշնչյան կերպարները տարբեր պատմություններ են պատմում Փրկչի մասին: Ավետարանական պատումը հենց այդ երկխոսությունների օգնությամբ է ամբողջանում: Դրանց մի մասում և գլխավոր կերպար Չունակի ներքին խոսքում առկա է խոր հեգնանք Փրկչի անձի և հրաշագործությունների մասին տարածվող պատմությունների նկատմամբ: Հեգնանքը, անհավատությունը պայմանավորում են «եղել է, չի եղել» երկընտրանքը: Գ. Խանջյանն այս ամենի գեղարվեստական իրացմանը հասնելու համար ընտրում է մեկ կերպարի տեսանկյունը: Ձուլվում են հեղինակի և Չունակի հայացքները: Հեղինակն ընթերցողին փոխանցում է իրադարձային շղթայի միայն այն մասը, որ տեսել և ընկալել է Չունակը: Առաջ է քաշվում հեղինակ=Չունակ բանաձևը: Վիպակի տարածաժամանակային տիրույթը ներկայացվում է Չունակի ընկալումներին համատասխան: Տեղաժամանակային այս պայմանական սահմանափակումը արդյունավետ հնար է կասկածը, անհավատությունը և երկբայությունն արտահայտելու համար: Ամենագետության սահմանափակումը բերում է չլուսավորված տիրույթներ, քիչ երևացող, ակնարկայնորեն գծագրվող կամ ընդհանրապես չերևացող կերպարներ, որոնք ավելի են ընդգծում հեգնանքը և երկբայության հնչերանգը: Մեկ կերպարի տեսանկյունը առաջին պլան է բերում իրադարձային այնպիսի շղթա, որից դուրս են մնում քրիստոնեական հրաշքները, մարդկանց բժշկելու տեսարանները և ընդհանրապես Փրկչի կերպարը: Չունակին հանդիպող անձինք պարբերաբար տեղեկություններ են հաղորդում Փրկչի մասին՝ մեծ մասամբ հեթանոսական-ծաղրական հնչերանգով: Այդ կերպարների մեծամասնությունը նույնիսկ ականատես չէ Փրկչի գործողություններին, պատմում է

իբրև երկրորդ կամ երրորդ օղակ՝ «չեմ տեսել, պատմել են» շեշտադրումով: Այս հնարը ավելի է հեռացնում ընթերցողական տեսադաշտից վիպակի հետին պլանում ծավալվող քրիստոնեական իրադարձությունների շղթան: Այսպիսով՝ առաջին պլանում զուտ Չունակն է և նրա դիտանկյունը. իրադարձային շղթան ներկայացնում է Չունակի՝ Փրկչին որոնելու ապարդյուն գործողությունների շարքը: Հետին՝ խորքային պլանում Քրիստոսի հրաշագործություններն են, Հուդայի դավաճանությունը, խաչելության տեսարանը, որոնք դուրս են Չունակի, հետևաբար նաև հեղինակի ու ընթերցողի տեսադաշտից, բայց առանց տեսանկյան խախտման ծավալվում են ողջ վիպակում՝ հեգնանքով գերհագեցած և անպայման անցկացված Չունակի պրիզմայով: Քողարկվածությունը պայմանավորում է և՛ հեգնանք, և՛ խորհրդավորություն:

Մեկ կերպարի տեսանկյունը ներդաշն է բացակայող կերպարի պայմանաձևին: «Սպանել Փրկչին» վիպակում բացակայող կերպարը հենց Փրկիչն է: Նա գործում է զուտ հետին պլանում: Սակայն սա չի խանգարում, որ գործառութային տեսանկյունից Փրկիչը դառնա վիպակի կառուցվածքային կենտրոնը: Ի վերջո նա է բոլոր գործողությունների հիմնական ազդակը: Փրկչին բացակայության կարգավիճակ է հաղորդում զուտ պատումի մեթոդը՝ մեկ կերպարի տեսանկյունը: Միայն Չունակի տեսադաշտից Փրկչին դուրս թողնելով՝ Գ. Խանջյանն ստանում է արտաբեմական կերպար՝ ամբողջացված հեգնախառն բնութագրումներով, անորոշությամբ ու անհայտությամբ պայմանավորված խորհրդավորությամբ:

Վիպակի համատեքստում խիստ կարևոր է Աբգար արքայի՝ Մ. Խորենացու «Հայոց պատմությունից» հայտնի Փրկչին ուղղված նամակի ներբերումը: Այդ նամակը՝ իբրև արտաբեմական իրողություն, բեմական տիրույթ է բերվում հիշողություն-դետալի օգնությամբ: Չի խախտվում մեկ կերպարի տեսանկյունը: Նամակը «բեկվում է» Չունակի տեսանկյան մեջ և հանդես գալիս իբրև նրա հիշողության արտահայտություն. «Չունակն անգիր գիտեր այդ նամակը. ինքն էր գրառել Աբգարի թելադրանքից....» (Խանջյան Գ., 2020): Փրկչի՝ նամակին պատասխանելու որոշումը, որ դարձյալ հայտնի է Մ. Խորենացու «Հայոց պատմությունից» (Խորենացի Մ., 1981, 177), նույնպես հմտորեն բերվում է բեմական տիրույթ: Հնարը երկխոսություն-«պատմությունն» է, բայց այս անգամ Չունակը

հանդես է գալիս իբրև խոսակցության թաքնված ունկնդիր, այլ ոչ իբրև մասնակից: Չունակի նախկին ուղեկիցներ Անանը և Մարը Քրիստոսի աշակերտներին են փոխանցում Աբգար արքայի խնդրանքը (Խանջյան Գ, 2020): Հեղինակը ներկայացնում է երկխոսության միայն այն մասը, որն ունկնդրել է Չունակը: Մնացածը դուրս է Չունակի (=հեղինակի, ընթերցողի) լսողության տիրույթից (Խանջյան Գ., 2020): Սակայն Չունակի լսածն արդեն բավական է, որ բեմական տիրույթում ակնարկվի Փրկչի հրամանով Թովմասի՝ Աբգարին պատասխան թուղթ գրելու իրողությունը: Հուդայի մատնության տեսարանը նույնպես ներկայացվում է մեկ կերպարի տեսանկյանը բնորոշ «կտրտվածությամբ» և «կիսատությամբ»: Դրա մի մասը բեմական տիրույթում է, մյուսը՝ արտաբեմական: Այսպես՝ Չունակը (=հեղինակը, ընթերցողը) տեսնում է տաճար մտնող ու տաճարից դուրս եկող Հուդային: Տաճարում կատարվող մատնության բուն դրվագը մնում է արտաբեմական դաշտում, քանի որ դուրս է Չունակի (=հեղինակի, ընթերցողի) տեսադաշտից: Հուդայի, ինչպես նաև մյուս կերպարների հոգեբանական ներվիճակները լուսաբանված չեն, նրանք չունեն ներքին խոսք: Արտաբեմական մատնության և Հուդայի հոգեբանական դրության մասին պատկերացում է ստեղծվում միայն արտաքին ցուցիչների և դրանց վերաբերյալ Չունակի ենթադրությունների օգնությամբ. «….զգուշավոր էր, քայլելիս ժամանակ առ ժամանակ նայում էր շուրջը ու նաև՝ հետ….» (Խանջյան Գ., 2020): Նույն սկզբունքով է կառուցված նաև Փրկչի ձերբակալության տեսարանը: Չունակի սահմանափակված տեսալսողական տարածությունը ներկայացնում է Փրկչի ձերբակալության միայն «կտրտված» և «մասնատված» պատկերը, որ, ըստ էության, դարձյալ մնում է արտաբեմականի՝ հետին պլանի տիրույթում. «Սակայն կրակներ տեսավ անտառում, ապա նաև ձայներ լսեց ու կանգ առավ…. Լսվեցին հայհոյանքներ, գոռոցներ… «Զինվորներ են, փախեք»,- աղաղակեց մեկը» (Խանջյան Գ., 2020): Հետին պլանում է նաև Փրկչի խաչելության տեսարանը, որ ամբողջանում է նախորդ դրվագներից արդեն ծանոթ երկխոսություն-«պատմություններով», դարձյալ «ցաքուցրիվ» խոսքերով և պատկերներով. «-Հրեաների արքային են խաչում….Խոստովանել է, որ ինքն է արքան ու աստծո որդին» (Խանջյան Գ., 2020):

Փրկիչը հետին պլանում է անգամ մահից հետո, քանի որ Չունակը տեսնում է

միայն պատանքված մարմինը: Եվ վիպակի սկզբից ծավալվող երկբայական հնչերանգն ամենաուժգին շեշտադրմամբ դրսևորվում է Չունակի ներքին խոսքում. «…ինչպիսի՞ն էր Նա….Եվ, առհասարակ, իրականում գոյություն ունե՞ր…» (Խանջյան Գ., 2020): Հետին պլանում ծավալվող քրիստոնեական իրադարձությունների շղթան ստանում է «ներդիր» տեքստի արժեք: Բեմական տիրություն վարպետորեն բերված ակնարկները և դետալներն ամբողջությամբ վերականգնում են հետին պլանի գործողությունների շղթան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ Գ. Խանջյանի «Սպանել Փրկչին» վիպակը ներկայացնում է միմյանց հակադիր աշխարհընկալումների և արժեհամակարգերի բախում: Հեթանոսականի և քրիստոնեականի սուր հակադրությունն այստեղ պայմանավորել է առաջին և հետին պլանների առկայություն: Առաջին պլանում ծավալվող «հեթանոսական» դիպաշարի թիկունքում քրիստոնեական իրադարձությունների շղթան է: Վերջինս ներկայացվում է կասկածի, հեգնանքի և թեականության հնչերանգներով, իսկ դրա տեխնիկական լուծման լավագույն տարբերակը հենց մեկ կերպարի տեսանկյունն է (ֆիքսված ներքին կենտրոնացում): Հեղինակի տեսանկյունը պայմանակորեն միաձուլվում է գլխավոր կերպար Չունակի տեսանկյանը: Քրիստոնեական իրադարձությունների անտեսանելիությունը և քողարկվածությունը հեգնանքի և խորհրդավորության պարարտ հող են ստեղծում, իսկ վիպակի վերջնահատվածում Չունակի ներքին խոսքը ներկայացնում է կասկածի ամենաուժգին հնչերանգը. եղե՞լ է արդյոք Փրկիչը, թե՞ ամբողջը զուտ հորինվածք էր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Բուալո Ն. (1980). *Քերթողական արվեստ.* Երևան: Սովետական գրող հրատ.

Խանջյան Գ. (2020). *Սպանել Փրկչին, Հիստերիաներ,* Երևան: Անտարես հրատ.

Խեչիկյան Հ. Սարիբեկյան Հ. (2019). *Մոդեռնիզմի դրսևորումները 20-րդ դարի հայ գրականության մեջ.* Երևան: Էդիթ պրինտ հրատ.

Խորենացի Մ. (1981). *Հայոց պատմություն,*. Երևան: ԵՊՀ հրատ.

Շարուրյան Հ. (2021). *Հիսուսյան վեպերը գրական զուգահեռներում.* Երևան: Արմավ հրատ.

Սյուրմելյան Լ. Զ. (2008). *Արձակի տեխնիկա. չափ և խենթություն,*. Երևան: ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ.

Женетт Ж. (1998). *Числа. Сочинения по поэтике в 2-х томах, том 2,*. Москва: изд. Сабашников.

REFERENCE LIST

Bualo N. (1980). Iskusstvo zachistki. *(Literary art).* Erevan. sovetskij pisatel' izd.

Handzhyan G. (2020). Ubej Spasitelya, Isteriya. *(Kill the Savior, Hysteria).* Erevan. Antares izd.

Hechikyan G., Saribekyan O. (2019). Proyavleniya modernizma v armyanskoj literature HKH veka. *(Manifestations of Modernism in Armenian Literature of the 20th Century).* Erevan. Redaktirovat' pechatnoe izd.

Horenaci M. (1981). Armyanskaya istoriya. *(Armenian history).* Erevan. izd. EGU.

SHaruryan H. (2021). Romany ob lisuse v literaturnyh parallelyah. *(Novels about Jesus in literary parallels).* Erevan. Armav izd.

Surmelyan L. Z. (2008). Prozaicheskaya tekhnika. razmer i bezumie. *(Prose technique. size and madness).* Erevan. NAN RA izd.

ZHenett Dzh. (1998). Nomera: Poeticheskie proizvedeniya v 2-h tomah. *(Numbers: Poetic works in 2 volumes).* tom 2. Moskva. izd. Sabashnikov.

РЕЗЮМЕ

ОБРАЗ ПЕРСОНАЖА РОМАНА ГУРГЕНА ХАНДЖЯНА «УБИТЬ СПАСИТЕЛЯ»

КАРЕН МАНУЧАРЯН

В статье представлен стиль повествования «Убей Спасителя» Гургена Ханджяна. С помощью структурного метода мы представили технические особенности перспективы одного персонажа. Модус повествования – условное всезнание автора, ограниченное точкой зрения одного персонажа.

Основной конфликт романа - между языческим и христианским

мировоззрениями, неоднократно проявлявшийся в армянской и мировой литературе. По словам Ханджяна, это столкновение в определенной степени модернизировалось и велось в связи с общественно-политическим переходом независимой Армении. В романе «Убить Спасителя» представлена цепь действий главного героя Чунака в поисках Спасителя. Получив приказ убить спасителя, Чунак знакомится с разными людьми, которые по большей части передают информацию об Иисусе в издевательском тоне. На протяжении всего действия Спаситель ни разу не появляется в поле зрения читателя. Он полностью вписывается в условность пропавшего персонажа. Тот факт, что Спаситель всегда скрыт, также способствует таинственности его характера. Чтобы представить все это более художественно и убедительно, Г. Ханджян выбрал перспективу одного персонажа. Черты этого метода последовательно сохраняются на протяжении всего романа.

Ключевые слова: Гурген Ханджян, «Убить Спасителя», роман, сюжет, персонаж, Чунак, язычество, христианство, перспектива, внутренний мир.

ABSTRACT

THE IMAGE OF ONE CHARACTER IN GURGEN KHANJYAN'S "KILL THE SAVIOR" NOVEL

KAREN MANUCHARYAN

The article discusses the narrative style of "Kill the Savior" by Gurgen Khanjyan's. With structural method, we presented technical features of one character's perspective. The mode of the story is conditional omniscience of the author limited to the point of view of one character.

The main conflict of the novel is between pagan and Christian worldviews which has been shown for many times in Armenian and world literature. According to Khanjyan, that clash has been modernized to a certain extent and was conducted due to the socio-political transition of independent Armenia. The novel "Kill the Savior" presents the main character Chunak's chain of actions in search of the Savior. Having received an order to

kill the savior, Chunak meets various people who, for the most part, convey information about Jesus in a mocking tone. Throughout the action, the Savior never appears in the reader's view. He completely fits into the convention of the missing character. The fact that the Savior is always hidden also contributes to the mystery of his character. In order to present all this more artistically and convincingly G. Khanjyan chose the perspective of one character. The features of that method are consistently preserved throughout the novel.

Keywords: Gurgen Khanjian, "Kill the Savior", novel, plot, character, Chunak, paganism, Christianity, perspective, inner focus.

Հոդվածը ստացվել է՝ 15.04.2022
Հոդվածը ուղարկվել է գրախոսման՝ 25.04.2022:
Հոդվածը երաշխավորվել է հրատարակման՝ 31.05.2022: